

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՆԸ ԿՈՍՈՎՈՅՈՒՄ,
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ

*Հովհաննես Նիկողոսյան**

Խաղաղապահ գործունեության և հումանիտար ինտերվենցիաների (ՀԻ) տեղը և դերը հետպոստսոցիալական աշխարհակարգում արժանի է ուշադիր հետազոտության, առավել ևս, որ նման առաքելություններն այժմ արագ աճ են արձանագրում: Այսպես կոչված «հանուն խաղաղության պատերազմի» գաղափարն առաջ մղող գործոններից կարելի է նշել այն աննախադեպ կարևորությունը, որ տրվում է մարդու *միջազգայնորեն ճանաչված* անօտարելի իրավունքներին մեր օրերում, որն էլ գտնվում է ՀԻ տեսության հիմքում: Եթե նույնիսկ ոչ ՄԱԿ-ի կողմից թույլատրված ինտերվենցիաներն ամբողջությամբ անօրինական են, ինչպես պնդում են որոշ գիտնականներ, այն ուշադիր ուսումնասիրության է արժանի գոնե այն պատճառով, որ հասկանանք համաշխարհային անվտանգության նախկին տասնամյակի իրականությունը և անենք կանխատեսումներ միջնաժամկետ զարգացումների մասով:

Շատ հեղինակներ, այդ թվում՝ Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Իրավունքի դպրոցի պրոֆեսոր Շոն Մերֆին (*Sean D. Murphy*), պնդում են, որ մարդու բազմաթիվ հիմնաքարային իրավունքներ (ինչպիսին են՝ կյանքի իրավունք, կտտանքների արգելում, ցեղասպանության, ստրկության խնդիրներ, ինչպես նաև ոչ խտրական ներքին քաղաքականություն) հանդիսանում են պետությունների *erga omnes* պարտավորություններ, այսինքն՝ երկրները պարտավորված են հարգել այդ իրավունքները, այդ թվում նաև միմյանց հետ հարաբերություններում [1, pp. 370-375]:

Բավական ընդհանուր տեսքով, քաղաքագետների և միջազգային իրավունքի մասնագետների կողմից ՀԻ-ն ներկայացվում է որպես «ուժի կամ դրա սպառնալիքի կիրառում, որ իրականացվում է որևէ պետության (կամ պետությունների խմբի) կողմից իր սահմաններից անդին՝ առանց ուժի կիրառման են-

* Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, քաղաքական գիտությունների թեկնածու:

թակա պետության համաձայնության, և ուղղված է մարդու (բացի իր սեփական քաղաքացիներից) հիմնական իրավունքների և ազատությունների մասսայական և կոպիտ խախտումների վերացմանը կամ կանխարգելմանը (*fundamental human rights of individuals other than its own citizens* - անգլ.)» [2, p. 18]: Թերևս, ամենալայն տարածում և լեգիտիմություն գտած սահմանումը պատկանում է պրոֆ. Մերֆիին, որը ներկայացնում է ՀԻ-ն որպես առանձին պետության, պետությունների խմբի կամ միջազգային կազմակերպության կողմից ուժի կամ դրա սպառնալիքի կիրառում՝ միտված առաջին հերթին թիրախային երկրի քաղաքացիների պաշտպանությանը՝ մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների լայնորեն տարածված ոտնահարումներից (*widespread deprivations of internationally recognized human rights* – անգլ.) [1, pp. 11-13]:

Ըստ էության, ՀԻ գաղափարն ինքնին չի առաջացել 10 տարի առաջ, այլ կիրառվել է միջպետական հարաբերություններում դեռևս 19-րդ դարում, երբ, օրինակ, Ռուսաստանը փորձեր էր անում ներխուժել օսմանյան տիրապետության տակ գտնվող վասալ պետություններ՝ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների (հայեր, հույներ, բուլղարներ և այլք) իրավունքները պաշտպանելու պատրվակով՝ Թուրքիայի ներքին գործերին խառնվելու համար: Բայց ներկայիս տեսքով ՀԻ տեսությունը և դրա կիրառական պրակտիկան միջազգային հարաբերություններում, հիրավի, աննախադեպ է: Բացի մարդու անօտարելի իրավունքների հարգման հրամայականից, այն պետությունները, որոնք առավել ակտիվ են ինտերվենցիաների հարցում, ձգտում են միջազգային իրավունքի կողմից տրված լայն հնարավորությունների օգտագործմանը, որպեսզի իրենց, ըստ էության, տեղում լեգիտիմություն վայելող քաղաքականությունը դառնա նաև իրավական (լեգալ)՝ միջազգային իրավունքի տեսակետից: Այս առումով մենք կներկայացնենք 1999թ. Կոստովոյի և 2008թ. Հվ. Օսիայի օրինակները՝ այստեղից դուրս բերելով Լեռնային Ղարաբաղի համար կիրառելի մեխանիզմները:

Ինքնիշխանությունը, որպես ցանկացած պետության կարևորագույն որակ, ընդհանուր միջազգային իրավունքում իր տեղն է գտել ի դեմս 1933թ. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի, որը նշում է, որ ցանկացած պետություն միջազգային իրավասուբյեկտություն ունենալու համար պետք է ունենա 4 բաղադրիչ. հիմնական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն և կարողություն այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու համար¹:

ՀԻ տեսությունը, ի թիվս այլոց, հիմնվում է բացառիկ «սուվերենության» կամ «ինքնիշխանության» (հանձին դրա Վեստֆալյան տեսության) սկզբունքի

¹ Article 1: The state as a person of international law should possess the following qualifications: a) a permanent population; b) a defined territory; c) government; and d) capacity to enter into relations with the other states. *Montevideo Convention on the Rights and Duties of States*, para. 17.
http://www.cfr.org/publication/15897/montevideo_convention_on_the_rights_and_duties_of_states.html

մասնակի հերքման վրա: Այսպես, ըստ ինքնիշխանության տեսության անկյունաքար հանդիսացող Վեստֆալյան պայմանագրի (1648թ.)՝ ազգային-պետական ինքնիշխանության (*nation-state sovereignty* – անգլ.) գաղափարը հիմնված է 2 հիմնական գործոնների վրա. տարածքայնություն և արտաքին գործոնների դերի բացառում ներպետական կառույցներում: Նույն ոգով, ՄԱԿ Կանոնադրության 2(7) հոդվածն անօրինական է սահմանում որևէ միջազգային կազմակերպության և/կամ պետության խառնվելը այն գործերին, որոնք «ըստ էության գտնվում են պետության ներքին իրավասության շրջանակներում»: Երկրորդ աշխարհամարտից ի վեր միջազգային հարաբերությունների զարգացումը և պետությունների իրավակիրառական պրակտիկական հանգեցրին նրան, որ, օրինակ, ՄԱԿ գլխավոր քարտուղար Բուտրոս Դալին իր «Խաղաղության օրակարգը» (*An Agenda for Peace* – անգլ.) զեկույցում փաստեց, որ «...բացարձակ և բացառիկ ինքնիշխանության ժամանակն անցել է»¹: Ավստրալացի հայտնի պրոֆ. Թոնի Կոադին (*Tony Coady*) նշում է, որ «բացառիկ ինքնիշխանության» տեսությունը վտանգավոր կերպով հնացել է այնպիսի երևույթների ազդեցության տակ, ինչպիսին են գլոբալացման, տեղեկատվական և տնտեսական զարգացումները: Համաձայն պրոֆ. Կոադիի տեսության, ազգային պետություններն այժմ պիտի ունենան միայն «պայմանական ինքնիշխանություն» (*conditional sovereignty* – անգլ.), որի սահմանները կախված կլինեն մարդու իրավունքների և ազատությունների հարգման աստիճանից²: Որոշ հեղինակներ նույնիսկ ինքնիշխանությունը դիտարկում են որպես «պատասխանատվություն» [3]:

Այսպիսով, միջազգային հարաբերությունների ներկայիս համակարգում ինքնիշխանությունը հասկացվում է որպես պայմանական ֆենոմեն՝ կապված իշխանությունների ներքին լեգիտիմության հետ, և կառավարություններից պահանջում է հարգել մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքները: Մեր կարծիքով՝ ինքնիշխանության «պայմանականության» հարցը լիովին արդարացի է դնում Մ.Սմիթն (*Michael Smith*) իր «Հումանիտար ինտերվենցիա. էթիկական հարցերի ակնարկ» էսսեում, նշելով. «...այն ռեպրեսիվ հանդիսացող պետությունը, որ խախտում է իր քաղաքացիների ինքնավարությունը և անձեռնմխելիությունը, կորցնում է ամբողջական ինքնիշխանության բարոյական իրավունքը: Այսպիսով, աշխարհակարգի լիբերալ էթիկական պետական ինքնիշխանության սկզբունքը կախման մեջ է դնում մարդու իրավունքների հարգման մակարդակից» [4, pp. 271-295]:

Ստորև քննարկվող բոլոր դեպքերում կենտրոնական կառավարությունն ի վիճակի չի եղել և/կամ չի կարողացել էֆեկտիվ իշխանություն իրականացնել

¹ Boutros Boutros-Ghali, *An Agenda for Peace. Preventive diplomacy, peacemaking and peace-keeping*; pp. 20-21, 1992 <http://www.un.org/Docs/SG/agpeace.html>

² C.A.J. Coady, “The Ethics of Armed Humanitarian Intervention”, United States Institute of Peace, Peaceworks No. 45., July 2002; <http://www.usip.org/>

իր տարածքի որոշակի շրջանների բնակչության վրա (Վրաստանը՝ Հվ. Օսիայում, Սերբիան՝ Կոսովոյում): Վերոգրյալը հաշվի առնելով՝ մեր հետազոտությունը պնդում է, որ նման կազմավորումները (այսինքն՝ միջազգայնորեն ճանաչված պետությունները) որպես պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ՝ այս եզրերի նեղ, գիտական իմաստով, ճանաչելն արդեն իսկ կարելի է դնել հարցականի տակ:

Այս հարցի շուրջ ՄԱԿ մոտեցումների շրջադարձային կետ կարելի է դիտարկել ՆԱՏՕ ռազմաքաղաքական դաշինքի օպերացիան Հարավսլավիայում (*Operation Allied Force*, մարտ-հունիս 1999թ.). արդեն 1999թ. սեպտեմբերին ՄԱԿ գլխավոր քարտուղար Բ.Անանը հայտարարեց, որ ինքնիշխանությունը կարող է խախտվել ՀԻ միջոցով՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեպքում¹: Ինչպես նշում է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի պրոֆեսոր Ա.Բոգատուրովն իր «Ժամանակակից միջազգային կարգը» հոդվածում, «...ինտեգրացիոն միտումները, որոնք Եվրոպայում պատվեր էին ստեղծել գտնելու «պետական սուվերենության բարդություն» անցում կատարելու համար տեսական հիմնավորում՝ Եվրամիության սահմաններում ընդհանուր սուբյեկտայնությունը զարգացնելու համար, հանդիսացան այն բարեբեր միջավայրը, որտեղ պատրաստակամորեն ընդունվում էին կարևորագույն և, միննույն ժամանակ, խնդրահարույց դրույթները «հումանիտար ինտերվենցիայի իրավունքի» և «ավտորիտար ռեժիմների ոչ լեգիտիմության» մասին»²:

Եթե ամբողջացնենք ՀԻ վերաբերյալ տարբեր հեղինակների և պետությունների որդեգրած հիմնական մոտեցումները, կարելի է առանձնացնել 3 հիմնական դրույթ.

1. ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ունի ցանկացած ներխուժում, այդ թվում նաև հումանիտար ինտերվենցիա իրականացնելու բացառիկ իրավունք:
2. ՄԱԿ ԱԽ-ն ունի առավելություն մյուս բոլոր միջազգային կազմակերպությունների համեմատ, բայց ԱԽ ներսում կոնսենսուսի բացակայության դեպքում այն տարածաշրջանային կազմակերպությունը, որը պատասխանատվություն է կրում աշխարհի այդ մասի անվտանգության համար, իրավունք ունի ինտերվենցիա իրականացնելու, եթե հավաստիորեն հայտնի է, որ խաղաղապահ առաքելությունն իր մեջ ունի ավելի շատ օգուտ, քան անգործությունը: Ինչպես նշվում է Միջազգային հարաբերությունների դանիական ինստիտուտի հայտնի զեկույցում, «ԱԽ-ի կողմից

¹ Edward Luttwak, "Kofi's Rule. The National Interest, Winter 1999/2000, № 58, pp. 57–62

http://findarticles.com/p/articles/mi_m2751/is_1999_Winter/ai_58381622/

² Алексей Богатуров, "Современный международный порядок";

<http://www.intertrends.ru/one/001.htm>

անգործությունն ընկալվում է որպես անհրաժեշտ պայման՝ ապահովելու հումանիտար ինտերվենցիայի լեգիտիմությունը» [5, p. 108]:

3. Ցանկացած ինքնիշխան պետություն ունի ՀԻ իրավունք: Փրինսթոնի համալսարանի Ժամանակակից հետազոտությունների ինստիտուտի պրոֆ., փիլիսոփա Մ.Ուոլցերն (*Michael Walzer*) այս մոտեցման հայտնի ջատագովներից է: Ավելի հայտնի է նրա «ով կարող է, պետք է անի» (*“Who can, should”*) մոտեցումը, որն ամբողջովին արտահայտում է իր տեսակետները¹:

Շատ գիտնականներ, որոնք իրենց համարում են ՀԻ տեսության հակառակորդներ, պնդում են, որ հակամարտությանը երրորդ երկրների ներգրավմամբ ավելի շատ լուծվում են գլխավորապես այդ երկրների ազգային շահերի խնդիրները, այլ ոչ թե միտված են պաշտպանելու թիրախային պետության տուժածներին: Այս մոտեցման կողմնակիցները նշում են, որ «բարի նպատակների սկզբունքի» քողի տակ ներխուժող պետությունները լուծում են իրենց ազգային շահերի բավարարման պահանջները: Ավելի ճկուն մեկնաբանությամբ, «բարի նպատակների սկզբունքը» թույլատրում է այլ բազմաթիվ նպատակների գոյություն, բայց դրանց շարքում առաջնային նշանակություն պետք է ունենա «ճիշտ գործի» սկզբունքը, իսկ սեփական ազգային շահը չպետք է վճռորոշ եղած լինի ներխուժման որոշումը կայացնելու ժամանակ: Մասնավորապես, այսպիսի մեկնաբանություն են տալիս Բ.Կոպիտերսը և Ռ.Ապրեսյանը, ինչը, մեր կարծիքով, ավելի մոտ է քաղաքական ռեալիզմի սկզբունքին [6, էջ. 99-105]:

1999թ. Կոսովոյի օպերացիայից հետո ՀԻ տեսությունը համարվեց քաղաքականորեն իրեն սպառած, և խնդիր առաջացավ այն փոխարինել այլ, ավելի բարեփոխված և բարեհունչ տերմինով և բովանդակությամբ: Պաշտպանելու պատասխանատվության (*responsibility to protect* կամ «*R2P*» - անգլ.) քաղաքականությունը համարվում է նոր, միջազգային անվտանգության և մարդու իրավունքների նոր, որ հայցում է միջազգային հանրության ներգրավումը կանխարգելելու և դադարեցնելու ցեղասպանությունները, պատերազմի հանցագործությունները, էթնիկ զտումները և մարդկության դեմ հանցագործությունները՝ թիրախ-պետության բնակիչներին ազատելու նպատակով: Ըստ էության, *R2P*-ն միջազգային բառարան է մտել 2005-ին ՄԱԿ համաշխարհային զագաթաժողովի արդյունքում, երբ ԳԱ եզրափակիչ փաստաթղթում ներառվեց դրույթ այս մասին²:

Կոսովոյի օպերացիայի մասին հնչել են բազում կարծիքներ, հրապարակվել տարբեր աշխատություններ՝ ամբողջովին հետազոտելով այս ճգնա-

¹ *Michael Walzer*, "The Argument about Humanitarian Intervention" // Polylog: Forum for Intercultural Philosophy, 2004. <http://them.polylog.org/5/awm-en.htm>

² Մանրամասն տե՛ս Paragraphs 138-139 of the World Summit Outcome Document http://www.responsibilitytoprotect.org/index.php?option=com_content&view=article&id=398

ժամի էության բոլոր կողմերը: Հնչել են ինչպես ՆԱՏՕ գործողությունները հիմնավորող կարծիքներ, այնպես էլ այդ ներխուժման «իրական» պատճառները բացահայտող վերլուծություններ: Այդ հեղինակների աշխատություններից կարելի է նշել Թ.Կնուդսենի «Կոսովոն պատերազմի և խաղաղության միջև» (*Tonny B Knudsen, «Kosovo Between War and Peace», 2007*); ՆԱՏՕ-ական ուժերի հրամանատար Ու.Քլարկի «Սկսելով ժամանակակից պատերազմը» (*Wesley K. Clark, «Waging modern war: Bosnia, Kosovo, and the future of combat», 2001/02*); Ի.Դաալդերի «Տգեղ հաղթանակ. ՆԱՏՕ-ի պատերազմը Կոսովոն փրկելու համար» (*Ivo H. Daalder, Michael E. O'Hanlon, «Winning ugly: NATO's war to save Kosovo», 2000*) և այլ հեղինակավոր աշխատանքներ: Այս աշխատություններն առաջարկում են բազմաթիվ տեսություններ՝ ՆԱՏՕ ռազմական գործողության պատճառների և հետևանքների մասին, որոնցից գլխավորը, կարծում ենք, տարածաշրջանում մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտումներից ալբանական բնակչությանը փրկելու արդարացումն է: Ընդհանրապես, այս օպերացիան համարվում է շատ հաջողված՝ ՀԻ տեսության դիտանկյունից:

Հվ. Օսիայի դեպքում, երբ Ռուսաստանը 2008թ. օգոստոսին ներխուժեց Վրաստանի միջազգայնորեն ճանաչված սահմաններ, պաշտոնապես բերվում էին 3 տարբեր պատճառաբանություններ և արդարացումներ: Առաջին. ՌԴ-ն ստիպված է եղել մտցնել հավելյալ զորամիավորումներ չճանաչված պետության տարածք՝ Հվ. Օսիայում միջազգային մանդատով օժտված խաղաղապահների մանդատի և առաքելության դեմ ուղղակի հարձակումներից պաշտպանվելու նպատակով¹: Երկրորդ. Ռուսաստանը չէր կարող «ձեռքերը ծալած նստել» և սպասել Սրեբրենիցայի դեպքերի կրկնությանը²: Կրեմլի մտերիմ *Russia Today* հեռուստաալիքը մի ամբողջ օր եթեր գնաց «Ցեղասպանություն Օսիայում» վերտառությամբ: Ռուսաստանի ՄԴ նախագահը պնդում էր, որ Վրաստանն իրականացրել է «ցեղասպանության ակտ»³: Այստեղ ակնհայտորեն հղում է կատարվում ՌԴ «իրավունքին» դիմելու *R2P* քաղաքականության կամ ՀԻ իրականացմանը՝ իր պատասխանատվության տակ գտնվող տարածքում էթնիկ զտումների և ցեղասպանության վտանգի առկայության դեպքում: Եվ վերջապես, երրորդ արդարացումը. Հվ. Օսիայում ապրում են ՌԴ քաղաքացիներ, և համաձայն Սահմանադրության 61-րդ հոդվածի՝ Ռուսաստանը պարտավոր է պաշտպանել իր քաղաքացիներին՝ դիմելով ՄԱԿ Կանոնա-

¹ РИА Новости. 10 авг. - Все действия российских подразделений в зоне грузино-осетинского конфликта направлены на помощь миротворческой миссии, заявил постоянный представитель РФ при ООН Виталий Чуркин. <http://www.rian.ru/world/20080810/150234479.html>

² Война в виде исключения - кто и когда имеет право на гуманитарную интервенцию? <http://www.mgimo.ru/news/experts/document118625.phtml>

³ Валерий Зорькин, "Пройти по лезвию бритвы"; "Российская газета" - Федеральный выпуск №4727 от 13 августа 2008 г.; <http://www.rg.ru/2008/08/13/zorkin.html>

դրության 51-րդ հոդվածի հայտնի դրույթին՝ ինքնապաշտպանության մասին¹: Ակտիվ ռազմական գործողությունների ավարտին, օսերի տվյալներով, զոհվել էր 365 մարդ՝ ներառյալ ծառայողներ և քաղաքացիական անձինք², ինչն էլ իրականում վրացական իշխանությունների ծրագիրն էր՝ չկան բավարար ապացույցներ պնդելու, որ օսերի դեմ ցեղասպանություն է ծրագրված եղել: Այս կարճատև պատերազմի մասին արդեն շատ հրապարակումներ են եղել, որոնց թվում Վ.Զախարովի և Ա.Արեշևի՝ փաստերով լի հետազոտությունը [7], ՌԴ նախկին նախագահ Վ.Պուտինի երբեմնի խորհրդական Ա.Իլարիոնովի հոդվածաշարը³, և, իհարկե, Ռ.Ասմուսի «Փոքրիկ պատերազմը, որ ցնցեց աշխարհը» գիրքը: Ինչն է, նույնիսկ ռուսաստանցի հեղինակներն են համամիտ, որ ՌԴ-ն պարտվել է տեղեկատվական պատերազմում [7, p. 23]:

Եզրակացություններ դարաբաղյան պատերազմի շուրջ

Միջազգային հանրության և հակամարտության միջնորդների հետ ՀՀ առօրյա գործունեության համար ավելի լավ կլինի ունենալ համահունչ փաստարկներ՝ մասնավորապես կիրառելով այն նույն բառապաշարը, ինչ եվրոպացիներն օգտագործել են Կոսովոյում, Սրբբենիցայում կամ Ռուանդայում, իսկ ռուսները՝ Հվ. Օսիայում: Առավել ևս, այս ամենի և՛ իրավական, և՛ քաղաքական հիմքերն անբասիր են և օգտագործման կարոտ:

Ըստ էության, իրավական հիմքերը դրա համար առավել քան բավական են: Մումզայիթի, Բաքվի և Կիրովաբադի էթնիկ գտումները (1988-1990թթ.), ինչպես նաև մեր օրերի Ադրբեջանում պետական մակարդակի հայատյացությունը և կոչերը՝ մաքրել Ղարաբաղը հայերից և «ոչնչացնել Հայաստանը»⁴, միտված են ուժեղացնելու ՀՀ և ԼՂՀ դիրքերն այս հարցում:

Այս հետազոտությունը պնդում է, որ *Հայաստանի Հանրապետությունը կիրառել է կոնֆլիկտում իր «միջամտելու պարտավորությունը» և իրականացրել հումանիտար ինտերվենցիա իր ինքնիշխան տարածքից դուրս գտնվող սահմաններ, երբ անկախության համար մարտնչող ժողովուրդը թիրախավորվել է «չարիքի պետության» կողմից:* Հայաստանը միայնակ է պատասխանել այդ մարտահրավերին, քանի որ շատ պետություններ, ներառյալ Ռուսաստանը, Միացյալ Նահանգները կամ այլք, եղել են կամ անհոժար, կամ անկարող բացահայտորեն միջամտելու կոնֆլիկտում՝ իրենց իսկ ազգային շահերի հաշվարկներից ելնելով:

¹ Նույն տեղում:

² The report of the Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia. Volume I, authored by Heidi Tagliavini, para. 1. <http://www.ceiig.ch/>

³ Андрей Илларионов, "Как готовилась война", Новая газета, № 66 от 24 июня 2009 <http://www.novayagazeta.ru/data/2009/066/17.html>

⁴ Речь МО АзР Сафара Абиева на совещании коллегии МО. БАКУ, 23 апр. 2010 - INEWS.AZ <http://www.1news.az/politics/20100424102112754.html>

ՄԱԿ ԱԽ-ի կողմից 1993թ. ընդունված բոլոր 4 բանաձևերը փաստել են, որ նախկին ԼՂԻՄ տարածքում և դրանից դուրս ստեղծված իրավիճակը մարտահրավեր և նույնիսկ ուղղակի վտանգ է ներկայացնում տարածաշրջանային կայունության համար (*this situation endangers peace and security in the region – անգլ.*)¹: Այսուամենայնիվ, ՄԱԿ անդամ պետությունները, կողմերին քաղաքական կոչեր անելուց գատ, կիրառելի օժանդակություն չեն ցուցաբերել կոնֆլիկտը կասեցնելու համար: Բուն ռազմական հակամարտության ընթացքում ԼՂՀ բնակչությանը ոչնչացումից փրկելու համար որևէ գործնական քայլ որևէ այլ պետություն, քան Հայաստանն է, քայլ չի ձեռնարկել:

Հաշվի առնելով վերը նկարագրված օրինակներում միջազգային հանրության ակտիվ և գործնական աջակցությունը ՀԻ և *R2P* տեսություններին, պետք է փաստել, որ այս դեպքում Հայաստանն է եղել այն «առանցքային պետությունը» (*Pivotal state – անգլ.*), որ իր վրա է վերցրել այդ ժողովրդին պաշտպանելու պատասխանատվությունը:

Հունիս, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Sean Murphy*, "Humanitarian Intervention: The United Nations in an Evolving World Order", University of Pennsylvania Press, Philadelphia, 1996.
2. *Holzgreffe J.*, The Humanitarian Intervention Debate // Holzgreffe J., Keohane R. (eds.) Humanitarian Intervention: Ethical, Legal and Political Dilemmas. Cambridge: Cambridge University Press; 2003.
3. *Francis Mading Deng*, "Sovereignty as responsibility: conflict management in Africa", Brookings Institution, 1996.
4. *Michael Smith*, "Humanitarian Intervention: An Overview of the Ethical Issues," in *Ethics and International Affairs: A Reader*, ed. Joel H. Rosenthal, Georgetown University Press, Washington, DC, 1999.
5. Danish Institute of International Affairs, *Humanitarian Intervention: Legal and Political Aspects*, Submitted to the Minister of Foreign Affairs, Denmark, December 7; 1999.
6. *Коппитерс Б., Фоушин Н., Апресян Р.*, Нравственные ограничения войны: Проблемы и примеры / Б.Коммитерс, Н.Фоушин, Р.Апресян; пер. с англ., М., Градарики, 2002.
7. *В.Захаров, А.Арешев*, "Кавказ после 08.08.08: старые игроки в новой расстановке сил", Москва, Изд-во "Квадрига", 2010.

¹ Resolution 822 (1993) Adopted by the UN Security Council at its 3205th meeting, on 30 April 1993
<http://www.unhcr.org/refworld/docid/3b00f15764.html>

ФАКТОР ГУМАНИТАРНОЙ ИНТЕРВЕНЦИИ В КОСОВО, ЮЖНОЙ ОСЕТИИ И АРЦАХЕ

Ованес Никогосян

Резюме

Роль и место миротворческой деятельности и гуманитарных интервенций в постпостдамском мире заслуживают тщательного исследования. Среди факторов, выдвигающих на первый план идею так называемой «войны во имя мира», можно отметить ту беспрецедентную важность, которая придается сегодня международно признанным неотчуждаемым правам человека, которые и заложены в основу теории о гуманитарной интервенции

В статье представлены примеры Косово 1999г. и Южной Осетии 2008г., из которых выводятся механизмы, применимые для Нагорного Карабаха.